18 հուլիսի 2019 թվականի N 896 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N 194-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման մասին» N 194-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշման N 1 հավելվածում՝

ա. 4-րդ կետի «բ» ենթակետը «հայեցողական» բառից հետո լրացնել «և վարչական» բառերով,

բ. 5.12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5.12. Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնին սպասարկելու համար հատկացվում է 31 ծառայողական ավտոմեքենա:»,

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.14-5.18-րդ կետերով.

«5.14. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին սպասարկելու համար հատկացվում է 10 ծառայողական ավտոմեքենա:

5.15. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին սպասարկելու համար հատկացվում է 30 ծառայողական ավտոմեքենա:

5.16. Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնին սպասարկելու համար հատկացվում է 3 ծառայողական ավտոմեքենա:

5.17. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնին սպասարկելու համար հատկացվում է 3 ծառայողական ավտոմեքենա:

5.18. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին սպասարկելու համար հատկացվում է 14 ծառայողական ավտոմեքենա:».

2) որոշման N 2 հավելվածում՝

ա. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-2.6-րդ կետերով.

«

2.1	ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին	11	1	10
2.2	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին	31	1	30
2.3	ՀՀ կրթության տեսչական մարմին	4	1	3
2.4	ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմին	4	1	3
2.5	ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	32	1	31
2.6	ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին	15	1	14

»,

բ. ուժը կորցրած ճանաչել 8.1-ին կետը,

գ. ընդամենը տողում «1701», «650» և «1051» թվերը համապատասխանաբար փոխարինել «1774, «652» և «1122» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հուլիսի 19
Երևան